



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71

7-63



ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ



Ա. Ա. ԽՈՃՈՒ

ՔԱՐԸ ԵՐԳՈՒՄ Ե

291-71
4 - 63

1904
Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ


891-21

25 SEP 2006

4-63. ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Հրատ. տիկ. Զաքելի

99 NOV 2010



ՔԱՐԸ ԵՐԳՈՒՄ Ե

ԿՈՎԿԱՍՍԵԱՆ ԼԵԳԵՆԴԱ

ՓՈԽԱԴՐ. Յ. ԴՈՒՐԲԱԴԻՆԵԱՆ



Ա.-ՊԵՏՐՈՎՈՒԽԹ

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐՄԱՆ»

1904

22.05.2013

11810



ՔԱՐԸ ԵՐԳՈՒՄ Ե

Дозвол. Ценз. С.-Петербургъ, 10 Января 1904 г.



(Կովկասեան լեզենդա)

զատուարձակ փռուած էր Տէու-
լեան թագաւորութիւնը բարձր
սարերի ու նեղիկ ձորերի մէջ:
Այնտեղ չկային փարթամ
պալատներ՝ հայելի լուսամուտ-
ներով, մարմար յատակներով ու
քանդակներով, ոչ էլ մետաքս ու թաւիշ կար
ժողովրդի հազին:

Անտաշ լեռ քարերից էին սարքւած նրանց
խրձիթները, տանիքները տափակ էին և շատ
անգամ բուսած կանաչով ծածկւած: Այն
տեղ աղամարդիկ ու կանայք հասարակ ու



575-

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

կոպիտ շոր էին հազնում, հասարակ փայտի նստարանների վրայ էին նստում ու քնում. իսկ թէ լուսամուտների շրջանակներում ապակի կարելի է դնել՝ այդ մասին ոչինչ չէին լսել այն տեղ նյոնիսկ ամենահարուստները։ Միմիայն մայրաքաղաքում, թագաւորական պալատի մէջ կարելի էր տեսնել մեծամեծ դաշլիճներ, ոսկեզօծ ամանեղէն ու կահկարասիք, արժէքաւոր նուրբ գործւածներ ու թանկագին քարեր։ Բայց և այնպէս՝ կարօտը երբեք չէր բաղխում տիուլցիների գռները. այն ամենը ինչ որ անհրաժեշտ էր, նրանց մօտ մշտապէս լինում էր։

Հողը պարարտ է. եթէ սիմնդր կամ ցորեն ես ցանում, ստանում ես տասնապատիկր։ Պառող է ուզում սիրադ... ահա, քո կողքին առանց խնամելու բուսնում են քաղցր սև սալր, տանձ, խնձոր, հաղարչ և հուն։ Խաղող ես ուզում, դու միայն տնկիր, և այնքան բերք կ'ունենաս, որ գնելու տեղ չես գտնի։ Մի՞ս ես ուզում... ամեն մի տիուլցի հօտերով ու երամներով անասուններ է պահում, որովհետեւ մարգագետինը այս տեղ ոչ ծայր ունի և ոչ սահման։ Գուցէ քաջութիւնդ ես ուզում փորձել, աչքի ընկնել. այն ժամանակ գնա՛ մտիր անտառի նւիրական թաւուտը. այնտեղ հենց քե՛զ են սպասում գայլերը, ար-

շերը և արագավազ քաւթառները։ Եթէ այդ էլ բաւական չէ, բարձրացիր վե՛ր ու մօտեցիր սարերի գագաթների ձիւնեղէն ծածկոցներին. այնուեղ կը հանդիպես երէներին, ոլորապայշա եղջւրներով զինւած վայրի նոխազներին ու քարայծներին։ Այո, ազատ ու արձակ էին ապրում տիուլցիները իրանց օրհնած երկրում և բոլոր հարևան ազգերի մօտ բարի համբաւ էին վայելում։ Նրանց երիտասարդների անձնւեր քաջութիւնը, աղջկերանց գեղեցկութիւնն ու բարեհամբցըր բանաւորութիւնը, և հասուն աղամարդկանց ու կանանց հիւրասիրութիւնը ամեն տեղ հռչակ էր ստացել։ Ինչպէս հարազատ մօրը՝ այնպէս էին սիրում նրանք իրանց հայրենիքը, այդ օրհնւած ու առատաձեռն երկիրը և կարծեմ չկար նրանց մէջ ոչ մի մարդ, որը թանկագին հայրենիքի բարելաւութեան համար չհամաձայնւեր իր բոլոր ունեցածի հետ տալ և սեփական անձը։

Սարի ուղղաձիգ կողի վրայ, անտառից դուրս, անդունդի ծայրին տեղաւորւած է բարեղէն խրձիթների մի խմբակ, ինչպէս թռչնաբուն։ Խիստ սեղմւել են ժայռին այդ խրձիթները. նրանք կարծես վախենում են առաջ շարժել ու իրանց բարձրութիւնից մտիկ տալ

դէպի անդնդախոր նեղ ձորակը, որտեղ պարզ
գետակը քարերի վրայով հոսում, աղմկում է,
արեգակի առաջ իր մարդարտանման ցայտուն
կաթիլներովն փայլում է ու պանում հեռու
հեռու, դէպի խոռվայշյղ և աղմկաշատ նիսանի
գետակի ծոցը, որը այնաեղ, սարի ետեռում,
բարկութիւնիցը ծփում է, ալեոր ալիքները
արագօրէն թաւալելով։ Անսովոր աչքի համար
հեռուից հազիւ նշմարելի են համեստ խրճիթ-
ները. նրանք կարծես սունկերի նման ար-
մատ են զցել ու միացել են ժայռի հետ։ Ամենա-
ծայրի խրճիթում, այն՝ որ անդունդի հենց
ծայրին է գտնւում, մի ժամանակ ծերունի
Ղահրամանն էր ասպրում։ Ջապինդ և աշխոյժ
էր նա դեռևս. իր ուժովը ջահիլներից ետ
չէր մնայ, թէե շատ տարիներ էին անցել
պիսով։ Հինգ զաւակ ունէր նա. երեք որ-
դի և երկու աղջիկ։ Որդիները բարի էին, պատ-
կառող և ժրաշան. հօր համար՝ անփոխարինելի
օգնականներ էին նրանք. իսկ թագաւորի հա-
մար՝ հաւատարիմ ծառաներ։

Աղջիկները, հեղիկ, սիրասուն և քաղցրա-
բարոյ լիննով հանդերձ, միւնոյն ժամանակ գե-
ղեցկուհիների հռչակ էին վայելում շրջակայ
փայրերում. մանաւանդ կրտսերը, Ռուսուդանը:
Դեղիցիկ է նա՝ թուխ անփայլ այտերի քնքոյշ

ալ-կարմիրովը, ծով-ծով մտմտող աչքերովը, սե-
ու ծանր գիսակովը, ալ-վարդ շրթունքների
վրայ խաղացող դուրեկան ժպիտովը։ Այս, գե-
ղեցիկ է նա, բայց հպարտ չէ. չունի նա և այն
արտաքին վսեմութիւնը, որով հովուհին աղ-
նւատոհմի է նմանում։ Ոչ ոք նրան չէր նմա-
նացնի աքսորւած արքայագուստրի, չէր տսի,
թէ նրա արածը իրան չի սազում, թէ նրա հա-
մար չէ այն աղքատիկ խրճիթը, որտեղ նա
ապրում է և որի քարածեղքերից կանաչ արօ-
տի փնչիկներ են դուրս ցցւած։ Նա իր տե-
ղումն էր այնաեղ, խրճիթի զիխաւոր զարդն էր։
իր ներկայութեամբ զարդարում էր ինչ-
պէս խրճիթը, այնպէս էլ կանաչ արօտագաշտը,
որտեղ անհոգ ոչխարներն էին թափառում, և
վճիտ գետակը, որ անկուռ դորգոռալորի դէպի
ձորն էր զահավիժում։ Ինչ գործի էլ ձեռք
զարներ, նրան սազում էր. ամեն բան այն-
պիսի ճարպիկութեամբ էր կատարում, որ մտիկ
տւողին միայն համշյք էր պատճառում։ Ջրի
է գնում գետակը, կուժը ուսին զրած—տե-
սէք ինչպէս գեղեցիկ է բռնել կուժը, ի՞նչպէս
թեթե ու ճարպիկօրէն սահում է քարերի վրայ-
ով. աչքդ չես կարողանում հեռացնել նրանից։
Ե՞րգ է երգում—լսեցէք, ի՞նչքան հե-
ռու է տարածւում ջինջ օդի մէջ նրա հնեղ

ձայնը... նրբազգաց արձագանքը իսկոյն պատասխանում է նրան. և այնպէս է թւում, կարծես իրանք՝ ողբները, սարերի այդ իշխանները, որտեղ որ է թագնել ու լսում են նրան, վախենալով միւնոյն ժամանակ մի գուցէ նրա երգը շուտով ընդհատեի, չտպաւորւելով նրանց լիշողութեան մէջ, և այդպիսով անկատար մնայ նրանց սքանչանքը:

Ռուսուդանը տնային դործերով քիչ էր պարապում. նրա քոյրն էր կատարում այդ դործերը, մնշիկ, հեղ ու ջանասէր քոյրը—Լազմետը: Ռուսուտանը հօր ոչխարներն էր արածում և ինչպէս հովտուհի, հօտերի հետ օրեր էր անցկացնում անտառի մէջ, մարդագետինների վրայ, և ներքեր՝ ձորի մէջ: Քոյքի նման ժայռից ժայռ էր ցատքում ու բարձրից մտիկ տալիս դէպի ցած, որտեղ նիսանի կայտառ գետակը, ամբողջովին ծածկւած ալեռ զանդուրների նմանող փրփուրով, զմրուխտ-կանաչի միջով հոսում է, խիճ է թաւալում իր ափերի վրայ և ցողանման կաթիներով ցնցղում է այնտեղի մայառները, որոնք առանձին սիրով կրուացել են դէպի գետակի վրդովւած ալեակները:

Ռուսուդանը իջնում էր ձորը, մօտենում էր այն գետակին, որ մի քիչ դէնք նիսանիի հետ էր խառնում, նստում էր քարի վրայ

շրին այնքան մօտ՝ որ աղամանդ կաթիները ուղղակի նրա երեսին էին զարնուում, և այդտեղից նա մտիկ էր տալիս ամպերից աւելի վեր գտնուող այն բարձունքին, որտեղից գետակն էր հօսում, մատիկ էր տալիս և իր շուրջը ու չէր կշտանում: Նա երգում էր, ինչպէս ազատ թռչնիկ. Երգում էր սիրական հայրենիքը, ոսկի ազատութիւնը, և թւում էր նրան թէ վերջ չպէտք է ունենայ այդ ազատ ու արձակ կեանքը, յաւերժական պէտք է լինի այն խրն-շցքը, որ սիրելի հայրենիքն է վայելում... ալեւոր վիշտը երբեք այցելութեան չպէտք է գայ նրանց երկրային դրախտին:

Բայց վիշտը արդէն մօտ էր. նա յանկարծ եկաւ, բոլորովին անսպասելի կերպով: Արաբը-տանի թագաւոր Դուրմեսը անթիւ զօրքով խուժեց Տիուլեան թագաւորութեան վրայ: Ով կարող էր զէնք կրել՝ բոլորն էլ թշնամուն ընդառաջ ելան. սիրելի հայրենիքը պաշտպանելու համար շատ արիւնահեղ կոիւներ մղեցին, իրանց բոլոր ձիզը թափեցին տիուլցիները, որպէսզի թշնամուն տապալեն, բայց իզուր... քաշերը մեռնում էին, զօրքը պակասում էր. իսկ թշնամին համար շատ էր գնում ու մտնում երկրի աւելի խորը, մինչեւ հասաւ և մայրաքաղաքին: Առիւծների նման էին պաշտպանուում տիուլցիները, բայց

թւով նրանք չափաղանց քիչ կին, չկարողացան զիմադրել անթիւ թշնամուն: Աչա, խորտակւեցին բաղաքի պինդ պարիսպները, փուլ եկան ու փշրւեցին... Եւ ամեն ինչ վերջացաւ... ոսկի ազատութիւնը չքացաւ, տիուլյիները խստասիրտ յաղթականների ստրուկները դառան, նոյն իսկ նրանց թագաւորն էլ գերի տարւեց Արաբստան: Ինչ լաւ բան կար երկրում՝ յաղթողներն առին ու հեաները տարան. իսկ ինչ որ չկարողացան տանել՝ տեղնուռտեղը այրեցին ու կործանեցին: Կողոպտեցին ժողովուրդը, խլեցին նրանից այն ամենը, ինչ որ դին ուներ, ծանր հարկեր դրին նրա վզին և երկրի բոլոր անկիւններում իրանցից կառավարիչներ նշանակեցին: Եւ սկսեցին այդ կառավարիչները նեղել ժողովուրդը, ծնշել նրան և ամեն մի չնչին բանի համար ծանր պատիճների ենթարկել:

Վիշտը հասաւ և այն խաղաղ անկիւնին, որտեղ իր ընտանիքով ապրում էր Ղաջրամանը, որտեղ Ծոչնիկի նման երգում էր Ռուբուդանը: Ծերունու երեք որդիները մեռան կռւում: Նրա ոչխարների հօտերը թշնամին՝ ձորից անցնելիս, քշեց ու տարաւ. Նրա պառաւ կինը վշտամաշ եղաւ. իրան էլ քիչ էր մնում գերի տանէին Արաբստան, հաղիւ կարողացաւ փրկանքով ազատւել... իր բոլոր ունեցած չունեցածը

տալուց յետոյ՝ նա խոստացաւ ամեն տարի ծանր հարկ ևս վճարել: Մեծ գժուարութեամբ կարողացաւ թագյնել թշնամուց իր երկու աղջկերանց, որոնք այժմ նրա միակ միսիթարանքն էին: Վատանդի անցնելուց յետոյ նրանք վերադարձան իրանց խրճիթը և ընդհանուր ուժով սկսեցին նորոգել այն ամենը, ինչ որ կարելի էր նորոգել: Լազիտը առաւօտից մինչև երեկոյ աշխատում էր. Ռուսուղանը նրան շատ քիչ էր օգնում: Առաւօտից մինչև երեկոյ վհատ, տխուր նա թափառում էր սարերում. Ժպիտը այլ ևս չէր երեսում նրա շրթունքների վրայ, չէր լսում և նրա ուրախ ծիծաղը:

Խորը խոցեց նրան անսպասելի դժբաղդութիւնը. իսկ անբաղդ հայրենիքի սյրող սէրը վառ բոցի նման կրակւեց նրա սրտում: Գիշերները յաճախ նա լաց էր լինում, իսկ լուսաբացին գուրս էր գալիս խրճիթից և իշնում դէպի գետակը. վիզը ճուկ նա այնտեղ նստում էր իւր սիրած քարի վրայ անշարժ և տխրամած հայեացքը մեխում գետակի շըերի մէջ: Պայծառ արեգակը այժմ նրա աչքին աղօտ էր երեսում, վեհ ժայռերի տեսքը մռայլ, իսկ գետակի և վրդովւած նիսանի անլուռ ողմուկները հնչում էին նրա ականչների էջ ինչպէս թախծալի հեկեկանք: Ամբողջ

բնութիւնը կարծես թոշնեց. կարծես նաև էլերբ... ալս, ինչ կը լինէր, գոնէ այդ վերջինը կողը իր ազատութիւնը: Ամեն ինչ Ռուսութիմանայի...
դասին յիշեցնում էր այն ստրկութիւնը, որին

երկար ժամանակ Ռուսուդանը տեղը նրս-
մասին այլ ևս չէր կարողանում մտածել: Ոչ մի դադ շարժելով՝ վերկացաւ տեղից և սկսեց
զգացմունքի համար նրա սրտում այլևս տեղանահաւասար ու ժայռոտ խաւերով վեր բարձ-
չէր մնացել:

Մի անգամ նա տեսաւ, թէ ինչպէս խըս-և համարեա մերկ տեղ տեղ միայն երկում էին
տասիրա զինւորները քաշքշելով տանում էին մենաւոր կաղնիներ: Վե՛ր, հա վե՛ր էր բարձ-
րակապ զերիներին, որոնցից շատերը իրարանում Ռուսուդանը, որտեղ և ինչու համար,
մի ժամանակ ուրախ ժամեր էր անցկացրած. մտածում էր միայն այն շղթայակիր անբաղդ-
պյո, նա տեսաւ այդ, նստեց քարի ծայրին, ների մասին, որոնց արար զինւորները քաշքշում
ձեռներով արտասուալի աչքերը ծածկեց ու բացականէց.

— Ով Աստուած, ի՞նչ պատճառով, ինչու համար է այդ բոլորը կատարւում: Եւ ինչու իմ
աչքերը պէտք է տեսնեն այդ: Ինչու համար չեմ կարող եղբայրներին նման եւ էլ մեռնել սիրական
հայրենիքի համար: Ինչու համար չեմ կարող իմ կեանքի գնովը ծիուկեան թագաւորութեան
ազատութիւնը գնել. ախ, ի՞նպէս երջանիկ կը լինէի, եթէ այդ հնարաւոր լինէր: Եւ շատ
երկար պէտք է տես արգեօք այս ստրկու-
թիւնը. դրան վերջ պիտի լինի՝ արգեօք և

բանալ: Ժայռերը այդ մասում գրանիտից էին
տասիրա զինւորներ մերկ տեղ տեղ միայն երկում էին
շղթայակապ զերիներին, որոնցից շատերը իրարանում Ռուսուդանը, որտեղ և ինչու համար,
մի ժամանակ ուրախ ժամեր էր անցկացրած: Մտածում էր միայն այն շղթայակիր անբաղդ-
պյո, նա տեսաւ այդ, նստեց քարի ծայրին, ների մասին, որոնց արար զինւորները քաշքշում
ձեռներով արտասուալի աչքերը ծածկեց ու էին: Նա կանգնեց միայն այն բոպէին, երբ
ոտները յոգնեցին ու պահանջեցին հանդիսաւ:
Ռուսուդանը նայեց իր շարջը և տեսաւ, որ
գտնվում է քարեղին տափարակի ծայրին.
իսկ ցածում, շատ հեռուն, նրա ոտների տակ՝
նիսանին է աղմկում իր արտագահոս ալիքներով.
փայլուն ժապաւէնի նման դալար հովիտում
նա դալարւում է, ինչպէս արծաթէ օձ.
հնացքան նեղ ու փոքրիկ է երկում վերեկց.
նաքուր օդի մէջ միայն նրա աղմուկն է լսւում
շարզ և անընդհատ, խանգարելով շրջակայ
ութիւնը.

Ոտներից մի փոքր հեռու, սարի ոչ այնքան

ուղղաձիգ կողի վրայ՝ Ռուսուդանը մի ահա-
գին գրանիտէ քար է տեսնում: Սարի գա-
գաթիցն է նա մի ժամանակ պոկւել, ապա
զառիվայրով այնքան է զլորւել, մինչև որ
հասել է հողաւետ մի յարմար տեղ, խորը
խրուել է հողի մէջ ու մնացել: Այն օրից անցել
են տաճնեակ տարիներ, նոյն իսկ մի քանի
դարեր. հողի նոր շերտերը գոտիների նման նրա
շուրջն են փաթաթւել. քարը շրջապատող
հողաւետ տափարակը խիտ բուսականութեամբ
ծածկւել է. քարը ինքն էլ՝ խորքումը այն-
պէս է խոտ ու մամուռի տակ թաղւել,
կարծես սարի անբաժան մի մասն է կազմում:
Ռուսուդանը շատ անգամ էր տեսել ներքելից
այդ գրանիտէ քարի ահազին զանգուածը:
Տեսել էր պայծառ կէսօրին, երբ արեգակի ճառա-
գայթների տակ սեխն էր տալիս, ինչպէս հրս-
կայ թռչունի ահազին բունք: Տեսել էր մշուշու
ու ամպոտ առաւտուն, երբ նա հաղիւ էր
նշմարւում ամպերի միջում, ինչպէս միւս
աշխարհից եկած մռայլ մի ստւեր: Տեսել
էր և պարզ երեկոյին, երբ մռադ կարմիրը
պէծին էր տալիս գրանիտի վրայ՝ իրբե պա-
տասխան վերջալցուի փայփայանքներին: Շատ
անգամ էր աեսել Ռուսուդանը այդ քարը
հեռւից, ներքելից. բայց այգրան մօտից

երբեք չէր տեսած. ուրեմն ինչքան վերև
էր բարձրացել... նա բարձրացրեց զուխր.
ուղղակի դէմուդէմ նա տեսնում է մի լայն
խոռոչ, որը տաճնում է դէպի մի լեռնային բը-
նական այր. իսկ դէնը, երկու երեք խաւ միայն
աւելի բարձրից՝ սկսում է արդէն ձիւնը, յա-
ւերժական ձիւնը, որի վառ սպիտակ գոյնը աչք
է կուրացնում համարեա, և որին Ռուսուդանը
յաճախ մտիկ էր տալիս իրանց խրճիթի շեմից
ու սքանչանում: Քանի նա այստեղ չէր բարձ-
րացած կարծում էր, թէ իրանց խրճիթը բար-
ձրը է կանգնած ձորի վրայ. իսկ այժմ—որտեղ
է նա: Ո՞րտեղ է այն սարահարթը, որի վրայ
նրանց խրճիթն է զետեղւած. այստեղից նա
մինչև անգամ չի էլ երեսում. երբեք այդքան
չէր բարձրացել Ռուսուդանը: Բայց ի՞նչպէս
լաւ է այստեղ... անյագաբար նայում էր իր
շուրջը և սքանչանում: Բայց յանկարծ մը-
տաբերեց, որ այդ բոլորը այլես նրանց չէ
պատկանում, օտարի ձեռք է տնցել. ամեն ինչ
այժմ պատկանում է այն խստասիրտ եկոր-
ներին, որոնք որաեղիցորէ եկան ու խլեցին այն
ամենը, ինչ որ տիուլցիները սիրում էին, ինչ
որ նրանց համար թանկ էր և նւիրական:
Դառնացաւ Ռուսուդանի սիրալ. չոքեց հողի
վրայ և երեսը ձեռների մէջ առած սկսեց լաց

լինել։ Առւի նման դուրս հոսեցին նրա արցունքները մատների միջով, զգեստի վրայ, սառը քարի վրայ թափւեցին։

— Ինչո՞ւ ես լաց լինում, ով աղջիկ, մոլորէլ ես, հարցրեց նրան մի պառաւ ձայն։

Թուսուգանը ցնցւեց ու նայեց շուրջը։ Նրանից ոչ հեռու գտնւած այրի մուտքի մօտ՝ ամբողջապէս խորշոմած ալեոր մի ծերուկ էր կանդնած։ Նրա փոքրիկ աչքերը փայփայանքով մտիկ էին տալիս իրան։

Ո՞վ էր նա արդեօք։ Այդքան բարձր կանդնած։

Հա, երեխ դա այն ճգնաւորն է, որի մասին տանը յաճախ լսած էր։ Նա այստեղ մենակ է ապրում սարերի մէջ, ձիւների սահմանների մօտ։ Նա չի վախենում ոչ ձմեռւայ փոթորիկներից, ոչ ձիւնատարափներից և ոչ փլումներից։

Այդպէս էր մտածում Թուսուգանը, նայելով ծերունուն. իսկ վերջինը մօտեցաւ, բռնեց նրա ուսից ու կրկն հարցրեց։

— Ինչո՞ւ ես լաց լինում, ասա։

Նրա աչքերը խելացի են և այնքան բարի ու փայփայող, ակամայ թափանցում են մտնում հոգուդ մէջ։ Եւ դու ցանկութիւն ես զգում մէջ՝ հաղորդել նրան այն ամենը՝

ինչ որ սրտում կայ. ցանկանում ես թափել նրա առաջ քո բոլոր վիշտը։ Եւ Թուսուգանը վճռեց ծերունուն յայտնել իր ցաւը։

— Ես նրա համար եմ լոց լինում, որ խստասիրտ թշնամիները մեր սիրական երկիրը խուժեցին։ Նրանք ամեն ինչ թալանում են, աւերում են և տիրուլցիներին գերի են տանում։ Նոյն ինքն մեր թագաւորը գերի է տարւած։ և ոչ մի տեղից չկայ մեզ որևէ օգնութիւն։


— Հա, գիտենմ, գիտեմ, պատասխանեց ծերունին և ալեոր զբուխը կամաց կամաց կրծքին թեքեց։

— Ախար ինչո՞ւ համար եկաւ մեր զիմին այդ անբաղդութիւնը. ինչո՞վ արժանացանք մենք գորան։

— Ո՞վ է իմանում... կամք Աստուծոյ է։

— Մի՞թէ Աստւած կը կամենայ յաւիտեանս յաւիտենից ոչնչացնել Տիուլեան թագաւորութիւնը։ Մի՞թէ բոլորովին, ոչ մի ժամանակ չենք տեսնելու ազատութիւն։ Մի՞թէ նա, որ ողորմած է, երբեք չէ խղճալու մեզ։

— Պէտք է յուսալ ու սպասել... ազատութիւնն էլ կը վերադառնայ, թշնամին էլ ամօթահար եղած կը հեռանայ, Տիուլեան թագաւորութիւնն էլ նորից կը ծաղկի և առաջւանից աւելի կը փարթամանայ։



575-85

— Ազատութիւնը, ասում ես, կը վերադառնայ... ե՞րբ... Եւ պաղատագին հայացքով մտիկ է տալիս Ռուսուգանը ծերունու աչքերին, կարծես, տիուզիների ազատութիւնը նրանից է կախւած:

— Թէ ե՞րբ, այդ ես քեզ կ'ասեմ, գանդաղելով պատասխանեց ծերունին ու շտկւեց:

— Կ'ասե՞ս:

Ծերունին զլուխը բարձրացրեց. Երկար ժամանակ կանգնած էր նա անշարժ և նայում էր վերև, շինչ կապուտակ երկնքին, կարծես աշխատում էր մի բան կարդալ այնտեղ: Նրա աչքերը խորն ընկած և շատ տարօրինակ էին մտիկ տալիս. կարծես, նա իր առաջ այնպիսի մի առանձին բան էր տեսնում, որ նրանից չոկ ոչ ոք չէր կարող տեսնել: Եւ ահա, նա շարժւեց ու մօտեցաւ ժայռոտ տափարակի ծայրին, նշանացի մօտ կանչեց Ռուսուգանին, ոսկրացած մատներովը ահազին դրանիակի քարը ցոյց տալով հարցրեց.

— Տեսնո՞ւմ ես, սա ի՞նչ է:

— Քար է, շշնչայ Ռուսուգանը:

— Հա, քար է. շատ դարեր առաջ նա սարի գագաթիցն է գլորւել. ինձանից շատ առաջ է զիորւել. շատ ժամանակ է նա այստեղ անխօս պառկած. միայն խոտ ու մամուռվ

քանի գնում՝ աւելի և աւելի ծածկում է. տեսնո՞ւմ ես:

— Տեսնում եմ:

— Ուրեմն լսիր. լաւ լսիր ինձ ու միտդպահիր. հէնց որ այս քարը երգել ըսկսի՝ ստրկութեանն էլ իսկոյն վերջ կը տրւի, Ցիուլեան թագաւորութիւնն էլ կրկին կը ստանայ իր ազատութիւնը. միտդպահիր: Դանդաղ քայլերով շուրու եկաւ ծերունին և զնաց մտաւ իր նեղ ու անձուկ այրը:

Ռուսուգանը մնաց մենակ. Նրա մտածմունքների առարկան այժմ այդ տարօրինակ գուշակութիւնն էր: Այդ օրը նա ուշ վերադարձաւ տուն:

— Ո՞րտեղ էիր, ինչո՞ւ այսքան ուշացար, հարցրին հայրն ու քոյրը:

— Վերեւումն էի, մեծ քարի մօտ, ասաց նա. Ես տեսայ այն ծերունուն, որը այրի մեջումն է ապրում: Հարցրի նրանից՝ թէ մենք մինչեւ ե՞րբ պէտք է սարուկ ապրենք, և թէ ե՞րբ պէտք է վերադառնայ մեր վաղեմի ազատութիւնը: Գիտէք նա ինչ պատասխանեց. —

«Երբ երգել կը սկսի մեծ քարը, այն ժամանակ Ցիուլեան թագաւորութիւնն էլ ազատ կը լինի»:

Լազեար ծիծաղեց. իսկ ծերունի Ղահրամանը ասաց.

— Այդ մարդը զիժ է. չեր էլ արժի լսել նրան:

— Ոչ հայրիկ, նա խելօք մարդ է երեսում և այնպէս է խօսում, որ չես համարձակի չհաւատալ նրան:

— Ե՞ն, դու ի՞նչ ես հասկանում, կարեց նրան Ղահրամանը. դու գեռ չահել ես, ծանօթ չես կեանքի հետ, ոչ մի խելագար չես տեսել. իսկ ես շատ եմ ապրել, շատ եմ տեսել. հաւատան ինձ, ծերուկիս, և գնա տեղումդ հանդիսաւ քնիր:

Բայց այդ զիշեր Ռուսուգանի քունը չեր տանում:

«Օր խօսքերին նոռ չհաւատայ, ծերունուն խելագարի տեղ չգրեց: Մտաբերում էր նրա խորը և ակնապիշ հայեացքը, վեհ ու ոգեսորւած դէմքը, հաստատ ու փսաահ ձայնը՝ երբ նա քարի մասին էր խօսում, մտաբերում էր այդ բոլորը և սրտի խորքում ասում ինքն իրան. «ոչ, նա խելագար չէ. ինչ որ նա ասաց՝ հեքեաթ չէ, դատարկաբանութիւն չէ... սուրբ մարդ է նա»...

Բայց ի՞նչ են նշանակում այն ժամանակ նրա խօսքերը. ինչպէս հասկանալ նրանց. «Երբ

այդ քարը երգել կը սկսի»... Երբ և ի՞նչպէս պէտք է երգել սկսի. կարելի բան է որ քարը երգել սկսի: Դիուցէ դրանով ուզում է ասել, թէ յուսալը իզուր է, տիուզիները ազատութեան երեսն այլես չեն տեսնելու: Բայց նա այնպիսի վստահութեամբ ասաց. «Պէտք է յուսալ, սպասել, և ազատութիւնը կը վերադառնայ»... Ի՞նչ է նշանակում այդ... պէտք է ելի հարցուփորձ անել:

Առաւատեան շատ վաղ նա վեր կացաւ տեղից, բարձրացաւ սարն իվեր ու գնաց մեծ քարի մօտ. յետոյ մօտեցաւ այրի մուտքին ու ներս նայեց: Ծերունին, թիկունքը նրան, ծընկաչոք և եռանդով աղօթում էր: Ռուսուգանը սպասեց մինչև աղօթքի վերջանալը, ապա քաշելով մօտեցաւ ծերունուն և հարցրեց.

— Հայր իմ, երեկ ասացիր, թէ մեր թագաւորութիւնը այն ժամանակ միայն կ'ազատւի խուժաններից, երբ այս քարը երգել կը սկսի. բայց մի՞թէ դա կարելի բան է:

Ծերունին ձեռք դրեց նրա գլխին և քաղցրութեամբ ասաց.

— Կարելի է, որդեակա, որովհետեւ Աստըծուն այդպէս է հաճելի:

— Ի՞նչպէս կը լինի, ուրեմն. քարն ի՞նչպէս երգել կը սկսի: Ի՞նչքը կը սկսի երգել:

—Զեմ իմանում. կարելի է՝ ինքը. բայց կարելի է գտնւեն ծարզիկ, գտնւի այնպիսի մի մարդ, որը ստիպէ այդ քարին ձայն հանել:

—Մարդ... բայց այդ ինչպէս պէտք է անել. ի՞նչ պէտք է անել դրա համար:

—Զգիտեմ, չղիտեմ, որդեակա: Ինչ որ բարձրից յայտնւած էր ինձ, ևս քեզ ասացի. աւելին չեմ կարող ասել, ինքս էլ չեմ իմանում:

Պուսուդանը ծերունու մօտից տիրած հեռացաւ և ամբողջ օրը նստած մնաց ներքեւում՝ գետակի ափին. նա մտածում էր. ի՞նչ պէս անե, որ քարը երգել սկսի, գոնէ որևէ ձայն հանի... բայց ոչ մի հնար չգտաւ:

Այնուշեաւ Պուսուդանին համարեա չէր կարելի տանը գտնել. ամեն օր կամ նիսանիի ափն էր գնում, որտեղից զրանիտէ մեծ քարն էր տեսնում, կամ սարովր վեր էր բարձրանում դէպի ճզնաւորի այրը և առաւօտից մինչև երեկոյ նստում այնտեղ ու մտածում: Տը նեցոյ հարցերին դժկամակութեամբ էր պատասխանում. և միայն մի՛ անգամ, երբ յամառութեամբ նրանք անպատճառ պատասխան էին պահանջում, թէ ուր է կորչում օրերով և ի՞նչ է անում, նա պատասխանեց:

—Ես մի՛շտ մտածում եմ, թէ ինչպէս անեմ, որ քարը երգել սկսի:

Հայրը սկսեց յանդիմանել նրան. քըրը զլուխը շարժեց և սկսեց համոզել, որ մոռանայ անմիտ ծերունուն. ասում էր, թէ անկարելին ոչ մի ժամանակ կարելի չի դառնայ: Բայց Պուսուդանին այլ ևս անկարելի էր համոզել: Լռութեամբ լսեց ամեն ինչ դիմադարձութիւն չարեց և առաւօտեան նորից գնաց Նիսանիի ափը և ամբողջ օրը նստեց այնտեղ, նայելով այն մեծ քարին, որ կապոյտ երկնքի երեսին՝ հեռաց մուգ փափախի էր նմանում, իսկ նրա շրջապատը թաւշանման մամուռով պատած լինելով՝ կանաչին էր տալիս: Պուսուդանի քըրը՝ Լազետը, մի անգամ փորձեց, եկաւ նրա մօտ և ուզում էր զօրով առն տանի նրան. բայց Պուսուդանը կարճ ասաց. «Թող»: Եւ նա այդ տսաց այնպիսի թափով, նրա ձայնի մէջ լսում էր այնպիսի հաստատակամութիւն, որ Լազետը վիճ'լ անդամ չը կամեցաւ. հասկացաւ, որ քրոջ հետ ոչինչ չի կարելի անել ու հեռացաւ, մտազբաղ, զլուխը աչ ու ձախ տարուբերելով: Այդ կերպով շատ օրեր անցկացրեց Պուսուդանը:

Մի անգամ, նիսանիի ափում նստած նայում էր, թէ ի՞նչպէս գետակի վրդովւած շըրերը սրածայր քարերին զարնւելով՝ փրփրում

էին ու յնցղում, ծիծաղում էին ու հեծեծում: Լսում էր գետակի այդ գարաւոր աղմուկը, որ հանգիստն ի՞նչ է չի իմանում, և ահա նրա զլխում մի միտք ծագեց. սկզբում թէ անորոշ էր, բայց գնալով աւելի և աւելի պարզւեց...

Իուսուգանի դէմքը պայծառացաւ, աչքերը փայլեցին, յաղթական ժպիտը խաղաց ալ վարդ շրթունքների վրա, նա հասկացաւ թէ բանը ինչումն է.

— Եթէ այն քարը լինէր այստեղ, չքի մօտ, և եթէ... այո, այն ժամանակ նա ձայնէր կը հանէր, այն ժամանակ նա կ'երդէր:

Թռաւ տեղից և քարայծից աւելի ճարպիկ թռիչքներով սկսեց վեր մաղլցել դէպի ծանօթ քարը. այնտեղ՝ ճգնաւորի քարայրին մօտեցաւ և ամեն ինչ պատմեց նրան: Ծերունին լսեց բոլորը. նախ լուց, իրան յատուկ, սուր հայեացքը ձգեց հեռուն. ապա ձեռքը դնելով աղջկայ զլխին, ասաց.

— Արդեօք այդ քեզ կը յաշողի թէ ոչ, ես չգիտեմ: Բայց տեսնում եմ, որ դուքարի գործի ես ձեռնարկում. տեսնում եմ որ այն սէրը, որ դու ունես դէպի քո հայրէնիքը, շատ ուժեղ է, և այդ սիրու համար

քեզ մատնում ես տաժանակիր աշխատանքի. բայց մի՛ մոռանար, որ այդ գործը շատ դանդաղ է առաջ գնալու. շատ երկար է քաշելու...

— Ես կը համբերեմ, հայր իմ, ես ունիմ համբերութիւն, կտրեց նրան թուսուգանքը. ես իմ կեանքն էլ չեմ խնայի, ամբողջ իմ կեանքը թող այդ գործի համար գնայ:

— Եւ կը գնայ, ասաց ծերունին. ամբողջովին կը գնայ, և գեռ կը պակասի էլ... դրա համար շատ քիչ է միայն քո կեանքը. այս գործում, շատ կարելի է, հարիւրաւոր տարիներ պէտք կը լինեն, եթէ ոչ աւելի...

Իուսուգանը մտմասց, յետոյ ասաց.

— Ի՞նչ անենք, հայր իմ, եթէ ոչ բոլորը, գոնէ կէսը, գոնէ մի մասը ես կանեմ: Գուցէ իմ մահից յետոյ ուրիշ մէկն էլ գտնւի, որ հայրէնի երկրի բարելաւութեան սիրովը վառւած, իր մէջ վճռէ շարունակել իմ գործը ու հասցընէ վախճանին:

— Դէ՞հ, եթէ այդպէս է, գնա՞ ուրեմն, Աստւած քեզ հետ, պատասխանեց ծերունին:

Ուրախ սրտով տուն վերագարձաւ թուսուգանք. ծիծաղում էր, հանաքներ էր անում ու երգում. մի բան՝ որ վաղուց նա մոռացել էր:

Առաւոտը հաղիւ լուսայած՝ վեր կացաւ տեղից, առաւ ծուրծն ու երկախժէ սրածայր ձողը ու բարկացաւ դէպի գրանիտէ քարը. մի քանի անգամ նրա շուրջը պատեց, անտղեց, յարմար տեղ ընտրեց կողքից, ձողի սուր ծայրը գրեց նրա վրայ ու միւս ծայրին խփեց՝ մէկ, երկու, երեք...

Հարւածներից խուլ ձայներ առաջացան շինչ օդի մէջ. նրանք զարթեցրին նիրհած արձագանքը ու միասին թռան չքացան հեռաստանի անհասանելի խաւերում. բայց նրանց ետեից արդէն ուրիշներն էին թռչում...

Ռուսուղանը ամբողջ օրն աշխատեց և երեկոյեան դէմ՝ զբանիաի մեծ զանգւածի վրայ մի փոքրիկ փոս մնաց: Ուրախ ժապաց Ռուսուղանը և գնաց տուն: Այնուհետեւ նա դարձաւ աւելի ուրախ և աւելի ասող խօսող. լսում էին և նրա հանաքներն ու ծիծաղը. պատահում էր նոյն իսկ՝ որ երգում էլ էր և չէր հրաժարում ընկերուհիների հետ պարելուց. բայց այդ բոլորն անում էր միայն երեկոներին, երբ մեռնող վերջաղուսի ալ կարմիր ճառագայթները ձիւնաւէտ գաղաթների վերայ հանգչում էին, երբ հեռաւոր սարերը կապտագոյն մառախուղով զիստաւորում, և պայծառ լուսինը հանգարած ու վեհ գնացքով ընթանալ էր

սկսում արագ մթնող երկնագաշտի անբաւ տարածութեան վրայ: Իսկ յերեկով նրան ոչ մի տեղ չէր կարելի տեսնել. արշալոյսի հետ անհետանում էր և մին էլ երեկոյեան վերագառնում տուն: Ո՞ւր է գնում, որտեղ է լինում, ոչ ոքի ոչինչ չէր ասում: «Զքօսնում եմ»... ասում էր ու վերջ տալիս. հարցերին: «Փորձում էին նրա հետքովը գնալ, բայց իսկոյն նկատում էր այդ, գէս ու գէն էր շեղուում ձանապարհից ու մոլորեցնում իրան հետևողին: Նա հաւատում էր՝ որ հայրենիքի բարելաւութեան համար է աշխատում, և զրանով ուրախ էր և հպարտ. այդ մասին ոչ ոքի բան չէր ասում, զիտէր որ իրան չեն հաւատայ...

Սարերում՝ վայրի ոչխարների ու եղջերուների ետեից ընկած որսորդները ժամանակ առժամանակ լսում էին համաչափ հարւածների զընդոց, որը գրանիտի քարից միայն կարող էր առաջանալ. մէկ էլ կանայք, կուժը ուսերին ձորը իջնելիս՝ քարի մօտ մի մարդկային ստեր էին նկատում. բայց ոչ առաջինները և ոչ վերջինները չէին իմանում, թէ դա ինչ է և ասում էին միմեանց.

— Մի մօտենաք այն տեղին, սարի ողիներն են այնտեղ բնակալած, գիշեր յերեկ թըռչում են նրանք քարի շուրջը և ոսկի կոփում:

Մի անգամ Լազետին աշողւեց բարձրանալ տեսնել՝ թէ քոյրը ինչով է զբաղւած: Նա զնայ ու տեսածը պատմեց հօրը. սա կանչեց իր շրջակայքի խելօք մարդկանց և բոլորը միասին սկսեցին համովել Թուսուգանին՝ որ քարից ձեռք վերցնի: Բայց երբ նա ամենահամոզիչ խօսքերով հօրից թոյլտութիւն խնդրեց շարունակել այն, ինչ որ իր աղատ կամքն է պահանջում, այն ժամանակ ժողովականների խորհուրդով ծերունի Ղաջրամանը վճռեց առ այժմ հաշտւել այդ հանգամանքի հետ, թոյլտալ աղջկանը շարունակել իւր դործը և սպասել... զուցէ վերջիվերջը խելքի գայ ու փոխւի:

Այնուհետև արդէն ոչ ոք Թուսուգանին չէր անհանգստացնում, տանը նրանից ոչինչ չէին հարցնում և կամ հետքիցը չէին գնում: Ամեն առաւօտ արշալցուի հետ բարձրանում էր դեպի դրանիտէ քարը և մուրծը ձեռին աշխատում: Խուլ հարւածների ձայնը թռչում էր հեռո՛ւ սարալանջերի միջով, իսկ քարի նեղ ու երկայն փորւածքը քանի զնում՝ աւելի և աւելի խորն էր մտնում:

Մի անգամ մշուշոտ ու մոայլ կէսօրին, երբ ամպերը շուրջառների նման փաթաթւեցին սարերի շուրջը, ծանր թուխպերն էլ արձիձի զանդւածի նման սպիտակ դադաթների

վերայ բարձւեցին, այդ պահուն ծերունի մենակեացը բարայրից դուրս եկաւ և հանդարտ քայլերով մօտեցաւ Թուսուգանին. ձեռին կաղնէ զաւազան ունէր, իսկ ուսերին ընձի մորթէ էր զցել:

— Որդեակ, եկել եմ քեզ հաղորդելու այն, ինչ որ ինձ հրամայւած է, սկսեց նա: Նրա ձայնը հանդիսաւոր ու հանդարտ էր հնչում, ինչպէս մարդարէի խօսքը. աչքերը որտեղորէ հեռուն էին դիտում և թռում էր թէ խօսողը նա չէր, այլ ուրիշ աւելի ուժեղ, աւելի կարող ու գիտուն մէկը:

— Հաճելի է Երկնքին քո աշխատանքը: Հաճելի դարձար դու քո համբերութեամբ ու խորին հաւատառվր դէպի նա, առանց Որի հրամանին ոչ թռչունը բուն կը հիւսե, ոչ լեռան քարը անդունղը կը վլորւի, ոչ էլ թափառական ամպը ծմակում կը թագնւի: Հաճելի դարձար դու Աստծուն դէպի քո հարազատ երկիրը ունեցած սիրովդ ու վճիռովդ, և նա կամենում է, որ մի՛ այն զու, ուրիշ ոչ ոք, միմայն զու ազատես քո հայրենիքը: Եթէ քո վճիռն և համբերութիւնը բաւականացան, զործը վախճանին կը հասցնես և Տիուկեան թագաւորութիւնը կը տեսնես աղատ, կարող և ուժեղ: Երկա՛ր պէտք է տեկ ու ձգձգւի քո

աշխատանքը, բայց ողորմած Աստւածը քո
միջոցով հրաշք պիտի գործէ: Մինչև քո գործի
վերջանալը ինչքան էլ տարիներ ու դարեր անց-
նեն, այնուամենայնիւ չեն պակասելու ոչ քո
ոյժը, ոչ քո գեղեցկութիւնը, ոչ էլ քո չափե-
լութիւնը: Աշխատանքի ձեռք զարնելիս ի՞նչ
պէս էիր՝ այնպէս էլ կը մնաս զործը վեր-
ջացնելիս և միայն այն օրից քո տարիները
նորից կը սկսեն հաշուի տուկ մտնել: Իսկ
եթէ համբերութիւնդ հատնի և դու, զործդ
վերջացրած, հրաժարես նրանից, այն բո-
պէից ևեթ կը սկսեն աւելանալ և քո տա-
րիները:

— Ոչ հայր իմ, ես չեմ հրաժարւի. և
կարող եմ միթէ հրաժարւել երբ այդքան
մեծ է Աստծու ինձ ցոյց առած ողորմութիւ-
նը: Խոնարհութեամբ, խորին հաւատով և բերկ-
րութեամբ եմ ընդունում այն, ինչ որ յայտ-
նեցիր ինձ: Ես հաւատում եմ քո խօսքերին և
երդում եմ իմ աշխատանքը թերի չժողնել,
ինչքան ժամանակ էլ նա տեկ, թէկուզ հազար
տարի:

— Այդ էլ հենց սպասում էի լսել քեղա-
նից. մնաս բարե, որդեակ. մենք միմեանց այլ
և չենք տեսնի:

— Դու գնում ես, հայր իմ, որտեղ ես
գնում:

— Ես գնում եմ այնտեղ, ուր դու շատ
ուշ պէտք է գաս, որտեղ «վերջ» խօսքը ան-
ծանօթ է բոլորին, որովհետև անսահման է
այն աշխարհը... մնաս բարե:

Եւ նա, գաւազանի վերայ յենւած, զրա-
նիտէ ժայռերով վեր բարձրացաւ դէպի յա-
ւերժական սառցցի աշխարհը: Ահա, նա ետ
նայեց, ձեռքի շարժումով Ռուսուդանին իր
վերջին հրաժեշար տւեց ու հեռացաւ, բարձ-
րանալով այնպիսի անշարժ ժայռերի վերայ,
որոնք հաղիւ էին նշմարւում: Ռուսուդանը
նայում է նրա ետևից և ցանկանում է նրան
զգուշացնել որովհետև ոտները թոյլ են, կա-
ռող է սայթաքել ու զլորւել անսակ վիհը:

Բայց ոչ ծերունին անշեղ վեր է բարձրա-
նում, առանց որևէ չանքի, ոտի տակ զրեթէ
չնայելով այնպիսի ժայռերի վերայ է բարձ-
րանում, որտեղ երիտասարդն անդամ մեծ զրժ-
ւարութեամբ գուցէ կարողանար բարձրանալ:
Քամին խաղում է նրա երկար զգեստի հետ,
քաշքշում է նրան, ալեսոր գանգուրներն է խառ-
նում ու զգգում: Ծերունու ոտների տակից
բարերը շառաչելով ցած են զլորւում, աւազը,
հողը և փոշու հետքը ծերունուց շատ ու շատ

Ետ են մնում: Նա ոչինչ չի նշմարում, միայն առաջ ու առաջ է գնում. քայլում է թեթև ու ազատ. կարծես նա ինքը չէ գնում, այլ ուրիշ ուժ է նրան բարձրացնում ու տանում վեր... և այդ ուժը այս աշխարհից չէ...

Ահա, նա արդէն յաւերժական ձիւնի սահմանին հասաւ. ահա, չինչ սպիտակ ձիւնի վերայ է դնում ոտները... աւելի բարձր... աւելի բարձր... ահա, երկայն ու թանձր ամպը եկաւ ու կտրեց նրա առաջը... բայց համարձակ մրտաւ ամպի մէջ. նրա կերպարանքը աղօտ բիծի նման է երկում այժմ թանձր ու գորշ մրշուշի միջից... ահա, ամպը սպատառւեց և որտեղիցորէ արեգակնային ճառագայթ դուրս պրծաւ. վառ փայլով կրակւեցին ձիւնի շերտերը, ինչպէս կենդանի աղտօնանդը. մթին թուխպը ոսկեթել փնչերով զարդարւեց ու բազմեց սարի սրտծայր գագաթին: Ծերունու կերպարանքը այժմ կարծես ամբողջովին լուսով է զգեստատորւած. աւելի բարձրահասակ է թրւում, թեթևաշարժ ու թափանցիկ... վեր, միշտ վեր է բարձրանում... անհող ու համարձակ, քայլում է նա ձիւնեղէն բարձունքների վրայով. կարծես տափարակ մի տեղ լինէր:

Ծերունին ետեից հաղիւ է հետք թող-

նում. կարծես՝ ոչ թէ ամբողջ ոտքն է կոխում, այլ միայն մատների ծայրերովն է երկրին քսուում. ահա, թուխպի հետ միևնոյն բարձրութեան վերայ կանգնած է նա. թուխպը պատառւեց ու նրան իր գիրկն լնդունեց. հէնց այդ ըոպէին կայծակի հզօր ու կարող որոսները երկնակամարի մի ծայրից միւսը զլորւեցին, ինչպէս բերկրալի ողջըն՝ որ յաղթական հնչիւններով զիմաւորում է հեռւից եկած սիրական ճամբորզին, որի աչքերը կրկին տեսնում են իր հարազատ երկիրը: Եւ կայծակը վառ նետի նման զուրս պրծաւ սարի գագաթին փոււած մթին վերարկւի տակից, պայծառ ժապաւէնի նման փաթաթւեց ձիւնեղէն աշխարհի շուրջը, օձի նման սողաց պացաւ թուխպի կապարանման զանգւածի վրայով ու չքացաւ...

Երկար ժամանակ մնաց Ռուսուլտանի աչքերի մէջ այդ կուրացնող փայլի վառ հետքը...

Անշարժ կանգնած էր նա, աչքերը յառած սարի գագաթին, և փախենում էր տեղից շարժւել. նրան այնպէս էր թւում, թէ այնաեղ՝ կապարէ ծածկոցից դէնը, տեղի է ունենում ինչ որ թաքուն, սոսկալի, վեհ ու անհասանելի մի բան: Վերջապէս կայծակը գագարեց, որոտագին զլրզոցները լոեցին, կապարէ թուխպը պա-

տառւեց ու կտոր կտոր եղաւ, նրա մանրիկ բերկորները դէս դէն ցրւեցին ու թագ կացան ժայռերի խոռոչներում:

Երևեցաւ պարզ երկինքը, դուրս եկաւ և զւարթ արեգակը, չեռու վանելով մժացնող ամպերի կցուերը. ձիւնաւէտ գտգաթը, չինչ սպիտակ ու հրաշալի, առաջւանից աւելի պայծառ լուսով փայլեց երկնակապոյտի վրայ:

Բուսուգանը նայեց ու զարմացաւ. ազօթեց. Արարչին, Որին մատչելի է այն ամենը, ինչ որ մարդկային խելքից բարձր է և անրժունելի, և նորից ձեռք զարկեց իր դործին: Եւ իրար ետեկց անց էին կենում օրերը, շաբաթներն ու տարիները. Բուսուգանի համբերութիւնը չէր հատնում. անձանձիր աշխատում էր, փորւածքն էլ մեծանում էր հետզետէ:

Նա այժմ ամեն օր ցած չէր իշնում. յաճախ սարերի վերայ կամ ճգնաւորի այրումն էր գիշերում: Տանիր նրան ոչ ոք այլեւ չէր յանդիմանում, չէր աղերսում. շատ չանցած այնտեղ փոփոխութիւններ եղան. Տերունի Նահրամանը մեռաւ, Լաղետը մարդու զնաց և ամուսնու հետ հայրական խրճիթում բնակւեց: Բուսուգանը սկսեց աւելի ուշ ուշ ցած իշնել. հազարից մէկ էր այցելում քրոջը. և այցելելիս անվերջ զարմանում էր: Լաղետի երեխաները

մեծացան, ինքն ու մարդը ծերացան, խորշոմեցին ու գառան ալեսը. մինչզեռ Բուսուգանը առաջւայ նման թարմ է, չահիլ ու զեղեցիկ: Զարմանում էին նրա հասակակիցիները և չին իմանում ինչի վերազրեն այդ հրաշը: Ամանը ասում էին, թէ Բուսուգանը այնպիսի խոտ է գտել, որը նրան յաւիտեանս յաւիտենից չահիլ է պաշելու. ուրիշները՝ թէ նա սարերում ողիների հետ մտերմացել է և նրանցից մէկը նրան կնութեան է տոել, այդ պատճառով չի ծերանում. մի քանիսն էլ ուզզակի ասում էին, թէ նա իր հոգին սատանային է ծախել, որն իր հմայքներովը նրան չահելութիւն է տւել այնքան ժամանակով, ինչքանով որ նա պայմանաւորել է: Նատ քիչերն էին միայն հաւատում նրա խօսքերին և սպասում, թէ նրա միջոցով հայրենիքը պէտք է փրկւի:

Տարիներն անցնում էին. Լաղետն ու ամուսինը մեռան. նրանց տղերքն էլ հասունացան, սպիտակեցին ու նոյնպէս մեռան, թողնելով իրանց սերունդը: Իսկ Բուսուգանը ողջ էր, չահիլ ու զեղեցիկ, և առաւօտից մինչեւ երեկոյ աշխատում էր քարի վերայ. այլ ևս ճորք նա համարեա չէր իշնում. այնտեղ մնացին միայն նրա հեռու ազգականները, որոնք չէին ճանաչում նրան, վախենում էին նրանից և

տեսնելիս՝ հեռու փախում: Իուսուգանի համբերութիւնը չէր նւազում. նրան չէր տաղակայնում այն անվերջ երկար ու չորքաշ կեանքը, որը զուրկ էր որևէ ուրախութիւնից և կամ հանգստութիւնից: Նա չէր նկատում ժամանակի անցնելը, չէր հաշւում՝ թէ քանի տասնեակ ու հարիւրեակ տարիներ պէտք է անցնեն նրա զիսով. չէր երազում նցնիսկ իր սեփական բազդաւորութեան մասին. այդպիսի մտքեր երբեք նրա զիսովը չանցկացան: Նա միայն տեսնում էր որ մուրճը տաշելով տաշելով՝ աւելի խորն է մտնում զրանիտի սրտի մէջ, աւելի և աւելի է մօտենում այն բղձալի օրը, երբ ծիուլեան թագաւորութեան վերայ աղատութեան նոր արշալոյսը պէտք է ծագի կրկին:

Ի՞նչ կ'անի այն ժամանակ Իուսուգանը, ինչպէս կ'ապրի այն մարդկանց մօտ, որտեղ չունի ոչ մի ազգական, ոչ մի ծանօթ, երբ ամեն կապ խզւած է նրա ու մարդկանց միշե... ի՞նչ է նրան սպասում այնտեղ—այդ մասին Իուսուգանը չէր մտածում: Եթէ նրան խսկապէս վիճակւած է համբերութիւնով հայրենիքը լծից աղատել, հենց այդ էլ նրա համար այնպիսի մի վարձատրութիւն է, որի առաջ ամենադառը կեանքն անդամ չնչին է

Երեսում: Եւ վերջապէս ինչու մտածել այն բանի մասին, որը հեռաւոր ու մշուշապատ ապագայի խորքումն է թաղւած:

Մի անգամ Արտևինի թագաւորը՝ Զաւարը, կանչեց իր զիսաւոր իշխաններին, իմաստուն ու փորձւած ծերունիներին, հրամայեց նրանց նստել իր առաջ փարթած առանձնասենեակում, պինդ ծածկել տւեց ոսկեզօծ դուները և ապա գարձաւ նրանց ու ասաց.

— Ով Արտևինի իշխաններ և իմաստուններ, ձեզ կանչել եմ, որ ինձ խորհուրդ տաք այնպիսի կարևոր մի գործում, որից կախւած է մեր թագաւորութեան ապագայ բարօրութիւնը. օգնեցէք ինձ. ես արդէն ծերացել եմ. իմ մահից յեացյ աեզս պէտք է բռնի իմ որդին՝ Միրիանը. հենց նրա մասին էլ կամենում եմ ձեզ հետ խօսել. նո ինձ անհանդստացնում է. վախեննում եմ՝ որ նա չի դառնայ այնպիսի թագաւոր, ինչպիսին ես կը ցանկայի տեսնել:

— Թագաւոր, ինչու համար չես հաւան կենում քո որդուն՝ թագաժառանգին, ասաց իշխաններից մէկը: Հոգուդ մեղք ես անում որ քո որդուց գանգատում ես. նա թէ սիրուն է և բարեսիրտ, թէ խելօք է և համարձակ:

— Այդ այդպէս է, պատասխանեց թագաւորը. բայց չկայ նրա մէջ մարդկային ամենա-

զլխաւոր յատկութիւններից մինը. համբերութիւն ասած ի ինչ է չի իմանում: Մանկութիւնից մինչև այսօր նա ոչ մի գործ սկսած ու վերջացրած չէ, թէև շատ գործերի է ձեռք զարկել: Ամեն տեսակ միջոցների զիմեցի, փորձեցի, որ նրան հեմբերել սովորացնեմ, ոչինչ գուրս չեկաւ: Մի բան եթէ նրան դուր է գալիս, իսկոյն տաք տաք կազում է գործի. բակում է շատ լաւ, հասցնում է նոյնիսկ մինչև կէսը, բայց մէկ էլ տեսար՝ ձանձրացաւ, թողեց և ուրիշներին յանձնեց, որ մի կերպ վերջացնեն: Կարծում էի, թէ տարիքը առնելով կը փոխւի. բայց ահա այժմ նա արդէն հասունացած է, և ոչ մի փոփոխութիւն չեմ նկատում նրա մէջ: Աշխատեցի նրան պետական գործերի հետ ծանօթայնել, որպէս զի, իբրև ապագայ թագաւոր, իմանայ թէ գործերին ժամանակով ի՞նչ ընթացը պէտք է տայ: Բայց չեղաւ, շատ շուտով ձանձրացաւ, մի փոքր հանգիստ խնդրեց, իսկ ինքը թուաւ գէպի նւիրական անտառները և սկսեց որսորդութեամբ զբաղել: Շուտով որսորդութիւնից էլ ձանձրացաւ, վերագարձաւ պալատ, շրջապատեց իրան գորերով և ասաց, «գիտնականների կեանքը ամեն բանից լաւ է»: Բայց երկու շա-

բաթ չանցաւ, և ահա նա մոռացաւ զրբերը և ոկան նկարչութեամբ պարապել:

Նորից կանչեցի ծօտս, համոզեցի՝ որ լուրջ գործով զբաղւի. երեք օր լմւ պարապեց. բայց յետոյ ուրիշ բան տեսաւ ու թողեց գործը, որով ամբողջ պետական օգտակար պէտք է լինէր: Վաղուց պէտք է նա իմ խելօք ու գործունեայ օգնականը եղած լինէր, բայց նա չ' կամենում ինձ օգնել, որովհետեւ համբերութիւն չունի: Եւ ահա ի՞նչ է այժմ իմ հոգոր. ի՞նչ կերպով կարելի է նրան փոխել, աշխատելու յանկութիւն մացնել նրա մէջ, դարձնել համբերող: Ահա այն միաբը, որը վաղուց ինձ հանգստառութիւն չի տալիս. ահա մի հանելուկ, որը ես մենակ չեմ կարող լուծել: Օգնեցէր ինձ, ով արտեխնեան իմաստուն մարդիկ, օգնեցէր ինձ ձեր բարի խորհուրդներովը:

Թագաւորը լոեց, լուռ էին և պալատականները, մի բոլորովին ճազատ գլխով՝ նօսր ու ալեոր միրուքով ծերունի վեր կացաւ տեղից և ասաց.

— Թագաւոր, թղյլ տուր ինձ ասել, որ քո որդին գրեթէ չի իմանում թէ ի՞նչ է վիշտը, ի՞նչ է կարօտութիւնը: Եթէ նա շըագայէր իր և օտար երկիրներ, տեսնէր, թէ մարդիկ ի՞նչպիսի դժւար աշխատանքով են

մի կտոր հաց ձեռք բերում, ինչպիսի համբերութեամբ են տանում և՝ դառն աղքատութիւնը, և՝ սովածութիւնը, և՝ յուրոր, գուցէ այնժամանակ նա նրանց խրզճար և ցանկանար լրջօրէն մտածել նրանց մասին. հասկանար, որ ինքը մեծ գործի համար է կանչւած, որ թագաւորը հօր նման պէտք է խնամէ իր ժողովուրդը: Թող գնայ ման գայ մեր թագաւորութեան մէջ, տեսնէ այն ամենը, ինչ որ կատարել է քո և քո պապերի ձեռներով և ինչ որ դեռ էլի կարելի է կատարել: Թող գնա և ուրիշ երկիրներ և մօտից տեսնէ, թէ ինչքան մեծ է մարդկային համբերութիւնը: Թող տեսնէ, թէ ինչպէս մարդիկ ձահիճներ են ցամաքեցնում, գրանիտ ժայռի մէջ տաճարներ են փորում, փոքրիկ աղիւսներից հսկայ շէնքեր են կանգնեցնում. ի՞նչպէս մերկ քարի վերայ հող են ածում և այդ հողի մէջ ցորենահատիկ սերմանում: Թող գնայ այդ բոլորը տեսնէ, գուցէ այն ժամանակ հսկանայ, թէ համբերութիւնը ինչքան կարեոր է մարդու համար:

Ծերունին խօսքը վերջացրեց. լսողները մի ձայնով գովարանեցին նրան ու հաւանեցին նրա խորհուրդը: Թագաւորը, մի փոքր մտածելուց յետոյ, համաձայնեց, շնորհակալ եղաւ ծե-

րունուց, հրամայեց ձեռաց կանչել թագաժառանդին՝ Միրիանին և յայտնեց նրան իր ցանկութիւնը, որ գնայ շրջագայի իր և օտար երկիրներ և մօտից տեսնէ, թէ մարդիկ ի՞նչպէս են ապրում, ինչ լաւ բան կարելի է օրինակ վերջնել նրանցից և ի՞նչ տեսակ վատ բաներից պէտք է աշխատել խոյս տալ: Թագաժառանդին շատ դուր եկաւ այդ բանը. նա ինքն էլ ցանկանում էր տեսնել օտար երկիրներ, ծովեր, սարեր ու ձորեր, շնորհակալութիւն յայտնեց հօրը և առանց դանդաղելու սկսեց պատրաստութիւն տեսնել:

Միրիանը գնայ ճանապարհորդելու. շրջագայեց Արտևինեան թագաւորութիւնը, ամեն բան տեսաւ, լսեց. բայց ոչ մի բան նրան չը գարմացրեց: Գնայ և օտար աշխարհներ, շատ բաններ տեսաւ. բայց այնտեղ էլ նրան ոչինչ չպարմացրեց, ոչ մի բան չխօսեց նրա սրտի հետ և չհասկացրեց այն ձշմարտութիւնը, թէ որտեղ ոյժը անկարող է՝ այնտեղ համբերութիւնն ու դանդաղ աշխատանքը կը տանեն յաղթութեան դափնին:

Երկար թափառելուց յետոյ՝ Միրիանը ճանապարհորդելուց էլ ձանձրանալով, թողեց ու գարձաւ վէպի հայրենիք, առանց իր մէջ որեւէ փոփոխութիւն դգալու: Վերադարձին

նա պէտք է անյնէր Տիուլեան թագաւորութեան միջով: Եւ ահա, երբ նա Նիսանիի ձորով էր անյեկենում, յանկարծ զրնդոցի ձայն լսեց, Հնչեղ ու համաշափ ձայն, կարծես մէկը մուրճը քարին է դարնում. զրնդոցը հարեան ձորի խորքիցն էր դալիս, յայտնի չէ թէ ինչ բարձր տեղից:

Միրիանը կանգնեց ու մաիկ արեց. կանգնեցին և նրա ուղեկիցները: Ի՞նչ է նշանակում դա արդեօք. նրանք իրանց շուրջը զննեցին, բայց առանձին ոչինչ չտեսան. աշ ու ձախ կողմերից պարիսպների նման բարձրացել են լեռների կողերը և զրեթէ բոլորն էլ խիտ անտառով են ծածկւած. միայն մի տեղում անտառ չկայ, մերկ ժայռեր են երեսում, նրանց միջում սեխն է տալիս ահապնին մի քար և նրա մօտ ինչ որ ստւեր է փողփողում. մարդ է այն, թէ ուրիշ բան, յայտնի չէ: Մօտակայ գիւղին համելուն պէս՝ Միրիանը հարցրեց առաջին պատահողին.

— Այն ի՞նչ զրնդոց է որ լսում է ձորում:

Գիւղականը պատասխանեց.

— Այնաեղ, բարձրումը, սարի ողիները ուկի են կոփում. սալի փոխարէն քարն են բանայնում, կրակի փոխարէն՝ արեգակի ճառագայթները, փութսի փոխարէն՝ աղատ քա-

մին: Այսուեղից երեսում է այն քարր, որի վերայ նրանք ուկի են կոփում:

— Այ քեզ բան. ուրեմն սարի ողինե՞ր են ապրում այնաեղ. ուղեկցիր ինձ, ես կամենում եմ նրանց տեսնել, խնդրեց Միրիանը. բայց խօսակիցը հրաժարեց.

— Լաւ տեղ չէ այնաեղ. մեղանում վախենում են. ոչ ես կը գնամ, ոչ էլ քեզ խորհուրդ կը տամ գնալ:

— Բայց ես կամենում եմ գնալ այնաեղ. չկայ արդեօք մէկը որ ինձ ճանապարհ ցոյց տայ. ես մենակ էլ կը գնայի, բայց անտառում կարող եմ մոլորւել:

— Ճաղիւ թէ գտնուի մի մարդ, որը յօժարի քեզ հետ այնաեղ գնալ:

Միրիանը գիւղը մտաւ, որ ուղեկից գտնի. բայց ոչ ոք չէր կամենում գնալ զրանիտէ քարի մօտ, ամենքն էլ վախենում էին. միայն մի չափի որսորդ յօժարեց ուղեկցել նրան անտառի միջով մինչեւ այն տեղը, որտեղից նա ինքը կարող էր գտնել ճանապարհը: Իր հետի մարդկանց ցածը թողնելով՝ Միրիանը սրսորդի հետ անտառի միջով անցաւ դէպի այն ժայռերը, որոնց վերայ սեխն էր տալիս քարը:

Միրիանը սրսորդից հարցրեց, թէ նա

ինչ է լսել սարի ոգիների մասին։ Որսորդն ասաց.

—Զանազան բաներ են ասում այդ զրբնացի ու քարի մասին։ մէկն ասում է, իբր թէ ոգիներն այնտեղ ոսկի են կոփում։ միւսը՝ թէ նրանք քար են ծակում, և երբ մէջէմէջ կը ծակեն, այն ժամանակ իբր թէ վերջ կը արւի մեր ստրկական կեանքին, կը կործանւի Սրաբական թագաւորութիւնը և նորից կը սկսի ծաղիկ մեր ծիուլեան թագաւորութիւնը ազատութեան ծոյզում։ Ասում են նյոնպէս, իբր մի տիուլցի աղջիկ իր յանցանքների համար դատապարտւած է, որ այդ քարը ծակի, իբրթէ շատ հարիւր տարիներ է, միշտ զարնում է քարին և չի կարողանում ծակի։ Եմինչե չծակի, ոչ թողութիւն կը ստանայ, ոչ կը ծերանայ և ոչ մահը նրան կ'առնի։ Ո՞վ է իմանում, զանազան բաներ են ասում, ո՞րն է ուղիղը, չենք իմանում, որովհետեւ ոչ մի կրտրիձ դեռևս չէ յանդզնել մօաւենալ այն քարին։

Թագաժառանգի հետաքրքրութիւնը վառեց. նա վճռեց որ ինչ էլ լինի՝ անպատճառ մօաւենայ քարին։ Ահա, նրանք դուրս էկան բաց տեղ, դէնը ծառերն արդէն յանցառ ու միմեանցից հեռու են բուսած։ ներքեւում՝ փրփրուտ նիստնին է աղմկում ու պղպջում։ վերե-

ւում՝ քարի ծալքերն են մէկը միւսի վերայ բարձրանում, սոսկալի դրանիուր սկին է տալիս, իսկ նրա վրայով՝ բարձրում, սարի զաղաթի ձիւնեղէն թագն է փայլում, նա ամբողջովին աղամանդէ կայծերով է վառւած ու պէծին է տալիս արեգակի ծառագայթների տակ զարհուրելի զրնդոյը քանի զնում աւելի ու աւելի լսելի է դառնում։ Որսորդը մնաս բարեասեց Միրիանին ու շտապով ետ դարձաւ։ Միրիանը սկսեց մենակ բարձրանալ ժայռերի ծալքերով. զրնդոյը զնարով ուժեղանում է. քարի մօաւ կանգնած մարդկային կերպարանքը արդէն աւելի պարզ է տեսնում. ակնապիշնայում է Միրիանը և որոշում է որ դա մի կին է. տեսնում է նրա երկար զդեստը, բարակ ձեռները, դլուխն ու սե զիսակը. աւելի մօաւ, աւելի մօաւ... ահա, նա արդէն բոլորովին մօաւեցել է. կանգնեց, նայում է։

Հսաւ երեսոյթին զա մի հասարակ կին է. շահիլ է և նրբակազմ. բայց գեղեցիկ է այնպէս, որ նմանը հազիւ թէ էլի պատահի։ Միրիանը իր հօր պալատում շատ գեղեցկուհիներ էր տեսել, բայց գրա նմանը չէր տեսել։

Գեղեցկուհին մուրճը ձեռքին՝ համաշափորէն հարւածում է երկաթէ ձողի վերի ծայրին. իսկ միւս ծայրը դրել է քարի ձեղքիւ

մէջ, ժամանակ առ ժամանակ կանգ է առնում,
ձողը հանում է ձեղքից, քարի փշանքը խնամ-
քով դուրս է ածում և կրկին սկսում է աշ-
խատել: Երկար ժամանակ Միրիանը նայում էր,
մինչեւ որ աղջիկը վերջապէս նկատեց նրան ու
զարմացած կանգ առաւ. շատ վազուց է որ
նա իր մօտ մարդ չի տեսել: Թագաժառանգը
նցնպէս մտիկ տւեց նրա դէմքին և ակամայ
ժպտայ, որովհետեւ աղջիկը նրան չափազանց
դուր եկաւ. և մարդիկ նրանից վախճնում են...
Միրիանը մօտեցաւ և հարցրեց.

— Անունդ ի՞նչ է:

— Բուսուղան:

— Ո՞վ ես դու:

— Տիուլցի աղջիկ եմ. ժամանակով հով-
ւուհի էի, հօրս ոչխարներն էի արածում.
բայց այդ շատ առաջ, չեմ յիշում նոյնիսկ
թէ այդ երբ էր:

— Ի՞նչ ես անում այստեղ:

— Ես կամենում եմ այս քարը մէջից
ձակել:

— Ի՞նչով մուրճով...

— Այս, ես միայն մուրճ ունեմ և երկաթէ
մի ձոր. ուրիշ ոչինչ:

— Բո աշխատանքը թեթևներիցը չէ.
բայց ինչո՞ւ համար ես այդ անում:

— Ինձ գուշակել են, որ երբ այս քարը
երգել կըսկսի, այն ժամանակ Տիուլեան թա-
գաւորութիւնը արաբական լծից կ'ազատւի:
Իսկ երբ քարը ներսից դատարկւի և այս խո-
զովակով ներսը չուր գնայ, այն ժամանակ քա-
րը ձայն կը հանէ:

— Ի՞նչպէս պէտք է անես, որ ներսը չուր
գնայ:

— Ես քարը գետի մօտ կը գլորէմ. իսկ
թէ այդ ի՞նչպէս կ'անեմ՝ գեռ ևս չեմ իմա-
նում. յետոյ ամեն ինչ կը պարզւի. այժմ ծա-
կելու ըիչ է մնացել. շուտով, շուտով կը վեր-
չացնեմ:

— Եւ շատ ժամանակ է որ դու աշխա-
տում ես:

— Ետո ժամանակ է, ես սկսեցի աշխա-
տել այն տարին, երբ արաբացոց թագաւոր
Դուրմեսը մեր երկրին տիրեց և մեր թագա-
ւորին գերի տարաւ հետք:

— Ի՞նչ ես ասում. դա շատ հին բան է.
Երկու հարիւր տարի է անցել այն օրից:

Բուսուղանը սաստիկ ապշելուց մի քայլ
ես գնաց:

— Ուրեմն երկու հարիւր տարի է ինչ որ
ես աշխատում եմ. ես կարծում էի, թէ աւելի
պակաս է, շատ աւելի պակաս է:

— Դու, երեխ, սխալւեցիր, որովհետեւ չկր
կարող Դուրմեսի ժամանակ ապրել:

— Ոչ, ես չեմ սխալւել. արաքները իմ աչ-
քիս առաջ եկան ու աիրեցին մեր երկրին:

Եւ նա պատմեց նրան այն ամենը, ինչ որ
տեսել էր և ինչ որ պատահել էր նրա հետ:

Միրիանը լսում էր նրան ու զարմանում: Զարմանում էր և չէր կարողանում հաւատալ, թէ այդ գեղեցկուհու քնքոյշ ձեռները երկու հարիւր տարի շարունակ մուրճով հարւածել էին կարծր գրանիտը, թէ երկու հարիւր տա-
րի օրէցօր նա աշխատել էր այն յուսով, որ
նրա աշխատանքը չի կորչի, ցանկալի պտուղ
կը տայ և նա կը տեսնէ այդ պտուղը: Նայում
էր համարեա միշիցը ծակւած քարին և զար-
մանում էր այն մեծ սիրոյ վրայ, որն այդ
աղջիկը տածում էր դէպի իր հայրենիքը. զար-
մանում էր նրա համբերութեան վրայ, այդ
մեծ և աննկուն ուժի վերայ, որով նա կարո-
ղացել էր պլուխ բերել այդպիսի աշագին, տա-
ժանակիր և ապերախտ մի գործ: Եւ կարմը-
րում էր ամօթից՝ մտարերելով իր անհամբե-
րութիւնը. ամաչում էր նշյնիսկ մտարերել,
թէ ինքը իր կեանքում ոչինչ չի շնել, ոչ մի
գործ իր վախճանին չի հասցրել, թէև այն
բոլոր գործերը, որոնցով նա կարող էր զբաղ-

ւել, մի կաթիլ էին ծովի մշչ՝ համեմատած
աղջկայ հսկայական աշխատանքի հետ, այդ
գրանիտեայ քարի հետ, որը ծակւած է առա-
ջին կանգնած նրբակազմ ու քնքոյշ աղջկայ
ձեռներովը:

Նա նայում էր և մտքումը ինքն իրան
խօսք տալիս, թէ այսուհետեւ նա կը փոխվի,
ոչ մի գործ կիսատ չի թողնի: Եւ ամեն ան-
դամ, երբ նա կը սկսի գործից ձանձրանալ, իս-
կոյն կը մտարերէ այս ակուղի աղջկայ մեծ
աշխատանքը. և այդ օրինակը կ'օգնի նրան՝
գործը հասցնել մինչեւ իր վախճանին: Բայց
ոչ յիշելը քիչ է. նա կամենում է նրան—
աղջկան ունենալ իր մօտ, մշտապէս տեսնել
նրան, որ ամե՞ն օր և ամե՞ն ժամ յիշէ, թէ
աղջիկը ի՞նչ վճռեց տալ հայրենիքին նրա բա-
րելաւութեան համար, այն ժամանակ ի՞նքն էլ
նրա օրինակին հետեւելով, չի խնայի իր կեան-
քը նուիրել այն մեծ գործին, որից կախւած է
հայրենիքի բաղզը: Բայց նախ քան այդ անելը
պարտաւոր է հանդիսաւ տալ աղջկան. բաւա-
կան է ինչքան նա չարաչար աշխատեց. ժամա-
նակ է որ այդ քնքոյշ ձեռները հանգիստ վայե-
լնեն. նա, այդ աղջիկը, իր վեհ օրինակովը Մի-
րիանին սովորացրեց, թէ ինչ է համբերութիւ-

նր. ինքն էլ դրա փոխարէն կը գնայ ու կ'ա-
զատէ նրա հայրենիքը:

— Այո, Ռուսուդան, մեծ է քո աշխատան-
քը, ասաց նա, երբ աղջիկն իր խօսքը վերջաց-
րեց. և ժամանակ է քեզ հանգստանալու, ժա-
մանակ է քեզ վարձատրելու. այդ ուժիցդ վեր
աշխատանքի փոխարէն: Այստեղ, այս քարի
մօտ, որի վերայ այնքան երկար աշխատեցիր,
երդում է քեզ Միրիանը, Զաւոր թագաւորի
որդին, որ Արտեհնի բոլոր զօրքը կը ժողովէ,
բոլորին ոտի կը հանէ, կը զինէ բոլոր կուելու
ընդունակ տիուլյիներին և դուրս կը փանէ
թշնամուն ձեր թագաւորութիւնից, որպէս զի
նա լինի ազատ, ուժեղ և փառաւոր, ինչպէս
եղել է մի ժամանակ: Ես գնում եմ, բայց նո-
րեց կը գամ այստեղ. դու կաց ու սպասիր. Ես
կը վերադառնամ ու կը բերեմ քեզ Տիուլեան
թագաւորութեան ցանկալի ազատութիւնը:

Վա՛ո, կրակի նման վառւեցին Ռուսուդա-
նի աչքերը, նրա այտերի վերայ կարմիրը խա-
զաց:

— Ես իմանում էի, իմանում էի, որ իմ
աշխատանքը իղուր չի կորչելու. իմ աշխատան-
քը մօտ է իւր վախճանին, մօտ է և այն օդ-
նութիւնը, որ պէտք է հասնի իմ թշւառ
հայրենիքին. գնա՛, գնա՛, քաջ թագաժառանգ,

կատարիր խոսաւումդ, և երկնային թագաւորը
կը հատուցանէ քեզ. այս կեանքում կ'ուղարկի
քեզ ուրախութիւն և բաղդաւորութիւն. իսկ
միւս կեանքում՝ արքայութեան յաւիտենական
վայելքը կը լինի քո բաժինը:

— Բացի դրանից նա ինձ կ'ուղարկի և մի
գեղեցկուհի ամուսին, որը ինձ կը սովորեցնի
այն, ինչ որ չկարողացան սովորացնել Արտեհնի
իմաստունները, աւելացրեց Միրիանը և մի
անգամ էլ Ռուսուդանի գեղեցիկ դէմքին նայ-
եց ու շատապով իջաւ ցած: Ռուսուդանը նրան
չհասկացաւ և չմտածեց նրա վերջին խօսքերի
վերայ. նա միայն մի՛ բան զիտէր՝ որ իրա աշ-
խատանքը մօտ է վախճանին. և կը կնակի
եռանդով ու հաճոյքով նորից շարունակեց գոր-
ծը... մի՛ բիչ էլ... մի՛ քանի օր... և բարը ար-
դէն կը ծակւի...

Եւ ահա հասաւ այն օրը, երբ Ռուսու-
դանի մուրճը վերջին հարւածը տւեց քարին,
վերջին բեկորը ընկաւ գետին և քարի ծակ-
ւածն ամբողջովին երկաց: Ուրախութիւնից
ծափ տւեց Ռուսուդանը և երկար ժամանակ
քարի շուրջն էր պտտում, մէկ այս և մէկ այն
կողմից մտիկ տալրով բացւածքին. յետոյ նրա-
ւեց մօտիկ և ընկաւ մտածմունքների մէջ՝
նայելով դէպի ցած, դէպի ձորը:

Մի բան էլ մնաց անելու, և այն՝ ամենապլխաւորն էր. ինչպէս անել, որ շուրջը քարի բացւածքովն անցկենայ, քարն ի՞նչպէս ցած տանել, նիսանիի ջրերում զետեղել: Նա յիշեց, որ ճգնաւորի այրում մի բահ էր տեսելու դնաց և գտաւ. նոր էր և մի փոքր ժանգոտած: Իռւսուղանը մարրեղ և սկսեց նրանսվ քարի մօտի հողը փորել. շուտով քարի շուրջը մեծ փոս կազմւեց. օրէցօր քարը աւելի և աւելի դուրս էր գալիս հողի միջից. մի բիշ էլ... և ահա, բազմադարեան անշարժ քարը շարժւել սկսեց: Իռւսուղանը փորձեց նրան հրել, և քարը, ամեն կողմից բացւած լինելով, հիմքից տատանւեց, առաջ թեքւեց, մի անգամ էլ տատանւեց և անտառելի դղրդոցով ցած զլորւեց, տանելով իր հետ բուսախառն հողն ու մանր քարերը:

Իռւսուղանը հաղիւ ժամանակ ունեցաւ ետ ցատքելու և իրան տեղումը պահելու: Գրանիտի ահազին զանդւածը արագութեամբ ցած էր թռչում՝ զարնւելով ժայռերին, շարդելով ու հետք տանելով դէպի հեռաւոր անդունդը:

Սարսափելի աղմուկից, ձաքձաքումից ու դղրդոցից լեռան կողերը դողդողացին. ինչ կենդանիներ որ կային շրջակայքում, մարդ թէ

անասուն, բոլորն էլ սարսափից փախան ու թագնւեցին: Իռւսուղանը կանգնած էր վերեւում, ժայռին սեղմաւած, և դողդողալով նայում էր ցած, նիսանիի փրփրուն ալիքներին: Քարը հայ զլորւում էր. ահա լսւեց ջրի աղմկալի ծփծփոցը և նա վերելից տեսաւ, թէ ինչքան բարձր՝ համարեա մինչև այն ժայռի ստորոտը, որտեղ նա կանգնած էր, կրակի սիւնի նման ցայտեցին վրդովւած կաթիլները, շատրւանի նման նրանք վեր թռաւն, կայծակնեցին ու պրապրզացին արեգակի առաջ, ինչպէս օդի մէջ ցըրւած անհամար թանկագին քարեր: Կատաղի մոնչոցով վրայ պրծան ալիքներն իրանց հոսանքը բռնող արդելքի վերայ, ճգնում էին պոկել նրան տեղիցը, չարզոտել, փշրել ու տանել իրանց հետ:

Բայց հանդիսա ու անշարժ նստած է գրանիտէ քարը ջրի քարոտ յատակի վերայ: Նեղսիրտ ալիքները չեն կարողանում շարժել նրան տեղիցը. զգալով իրանց այդ ապիկարութիւնը՝ նրանք բարձրաձայն հառաջեցին. և այդ հառաջանքը գատնազին ու սրտաձմլիկ հեկեկանքների փոխելով, գնաց ու ցրւեց ձորի մնչացած մթնոլորտում: Ուրիշ ալիքներ սլանալով հասան ու բռնեցին առաջինների տեղը, կատաղաբար յարձակւեցին հանդիսա նստած քարի

վերայ. բայց նրանք էլ միայն փրփրացին, գոյն-
զգոյն կաթիլներով իրանց շուրջը ցնցղեցին ու
անցան:

Նրանց ետևից երեացին նորերը, նոր կա-
տարութեամբ, նոր հառաջներով, մռնչոցով և
աղմուկով։ Զորումը, օդի մէջ՝ զզրդոց ու շա-
ռաչ էր միայն, որ լսում էր, կարծես դժոխքը
այնտեղ էր տեղափոխւել։

Ձեռները սեղմած սաստիկ բարախող սրբ-
տին՝ կանգնած էր Ռուսուդանը վերեռւմ, ժայ-
ռի վերայ և բոպէները, որոնք անցկացան մին-
չեւ քարի զլորւելը, նրան աւելի երկար թր-
ւացին, քան թէ այն դարերը, որ անցկացրեց
այստեղ՝ ծանր ու միօրինակ աշխատանքի մէջ։
Նա սպասում էր, և վախենում էր, և գողղո-
չուն սրտով ականչ էր գնում այն դժոխային
խառնիճաղանձ ձայներին, որոնք գալիս էին ձո-
րից և աշխատում էր զանազանել նրանց մէջ
մի ձայն, որը կարծես դուրս գալիս լիներ ծակւած
քարի վիրաւոր կրծքից։ Ահա, աղմուկը մի փոքր
հանդարաւեց, կաթիլները այժմ ոչ այնքան
բարձր են թռչում, փրփուրները ոչ այնքան
հեռու են ցայտում...

Եւ յանկարձ՝ կատաղի ալիքների աղմո-
կայող պղպջոցներից մի ձայն դուրս պրծաւ,
չի՞նչ ու պարզ ձայն, ներդաշնակ և ուժեղ,

ինչպէս մի յաղթական երգ. և սարի արձա-
գանքը, ծմակների ծոցերում զարթներով, հետն
առաւ նրան ու սլացաւ դէպի լազուր բար-
ձունքը, դէպի անթառամ ու անմահ գեղեց-
կութեամբ փայլող սարերի գաղաթները։

Արձանացաւ թուսուդանը, ամբողջովին
ականչ գարձաւ. միթէ... չսխալուեց նա ար-
դեօք... ոչ, ահա, գարձեալ լսում է միւնցն
ձայնը, գարձեալ գարձեալ... ահ, ուրեմն այդ
նա է, բարն է այդ երգողը։

Եւ զլուխը կորցրածի նման ցած վաղեց,
դէպի ձորը, առանց ոտների տակ նայերու.
Ժայռերի սրածայր ցցունքները նրա զգեստն
էին պատառոտում, բայց ոչ մի բանի վրայ
ուշադրութիւն չէր գարձնում, այլ սահելով
անցնում էր համարեա ուղղաձիգ լեռնակողե-
րով և չէր վախենում զլորւելուց։ Նրան թռչում
էր՝ կարծես, թռեր է ստացել ու թռչում է,
առանց ոտները շարժելու...

Ահա և ձորը, ահա և նիսանիի ափը, ահա
և քարը՝ նստած ալիքների մէջտեղում. ալեոր
ալիքները զարնուում են նրան, լալիս են, չա-
րանում, իսկ քարը անշարժ նստած է և նրա
կրծքից մինը միւսի ետևից ներդաշնակ հնչիւն-
ներ են դուրս գալիս և մէկմէկու հետ միա-

նալով՝ կազմում են հասարակ, բայց հրաշալի՝
և նոր մեղեդի:

Քարը երգում է:

Եւ այնքան վեհ, այնքան ներդաշնակ են
նրա երդի հնչիւնները, որ թւում է, թէ ներ-
սում մի երաժիշտ է նստել և լաւագոյն օր-
դանի վերայ նւագում է իւր նոր և դեռևս
չլսւած հանդիսաւոր օրհները:

Ռուսուգանը կանգնած է անշարժ և չի
հաւատում իր ականջներին. անյագօրէն մտիկ
է անում այդ հրաշալի հնչիւններին և նրա
սիրտը թունդ է առնում. ուրախութեան ար-
ցունքները սեղմում են կուրծքը, հաւաքում
են կոկորդի մէջ ու դուրս դարնում դէպի աչ-
քերը:

Քարը երգում է, և նա կարծես մի առ
մի չոկում է այդ երդի խօսքերը. նա երգում
է Ռուսուգանի տաժանակիր աշխատանքը, որը
պսակւած է փառաղարդ յաղթութեամբ, նա
երգում է ծիուլեան թագաւորութեան գալիք
ազատութիւնն ու փառքը: Քարը երգում է,
Ռուսուգանն էլ լսում է նրան և չի նկատում,
որ ինքը ձորումը մինակ չէ, այլ ամեն տեղ,
նիսանիի երկու ափերի վերայ, ժողովուրդ է
հաւաքւած. ամբողջ զօրքը հանդիսաւոր քայ-
լերով դիմում է դէպի քարը, իսկ զօրքի առա-

չից, չքեղ ձիու վերայ նստած, գալիս է թա-
գաժառանգ Միրիանը: Ահա, նա արդէն մօտ
է, ցած իշաւ ձիուց, մօտեցաւ Բուսուգանին.

— Ողջըն քեղ, Ռուսուգան, ուրախ լուր
եմ բերել քեղ. արաքները յաղթահար ու չարդ-
ւած են. նրանք համաձայնւեցին ծանր հարկ
վճարել ծիուլեան թագաւորութեան: Կորաւ,
չքայցաւ դարաւոր ստրկութիւնը. գարնան ա-
րեգակից աւելի վառ է փայլում այժմ ոսկի
ազատութիւնը քո թանկագին հայրենիքի հա-
մար:

Ցնցահար եղաւ Ռուսուգանը. նայում է
Միրիանին, նայում է ժողովրդին... ամեն տեղ
ուրախ դէմքեր, կենդանի զրոյց և կայտառ
ծիծաղ... այո, այդ է ազատութիւնը... հասաւ
վերշապէս այդ պայծառ օրին. և հանդարտ
չոքեց նա, աչքերը երկնքին ուղղելով, և ար-
ձանացաւ, անձնատուր եղաւ անձայն աղօթան-
քին: Երբ բարձրացաւ գետնից, Միրիանը բըռ-
նեց նրա ձեռից, մօտեցրեց ժողովրդին և ասաց
բարձրաձայն.

— Դուք ինձ ազատարար անունը տուիք.
բայց այդ անունը ի՞նձ մի տաք, այլ սրան. Եթէ
ես նրան հանդիպէի, եթէ նա ինձ չապշեցնէր
իր անձայր համբերութեամբը, իմ մտքովն էլ
չէր անցկենայ ծիուլեան թագաւորութիւնը

կեղեքիներից ազատելու գործը, որովհետեւ
մինչև այժմ ես իմ կեանքում ոչ մի գործ ըս-
կսած ու վախճանին հասցրած էի. և ձեր ա-
զատութեան գործը առաջինն է, որ մինչև
վերջը տարաւ անշամբեր Միրիանը: Բայց դուք
կարելի է չէք լսել, չէք իմանում, թէ այս աղ-
ջիկը ո՞վ է և ի՞նչ արեց ձեզ համար. լսեցէք:
Եւ պատմեց ժողովրդին՝ ինչ որ դիտէր
Ռուսուգանի մասին և աւելացրեց.

— Ուրեմն, եթէ նա զինէր, տիուլցիները
դեռ երկար ժամանակ ստրուկ մնացած կը լի-
նէին, ուստի նրան շնորհակալ եղէք, մի՛ միայն
նրան:

— Փառք ու պատիւ Ռուսուգանին և մեր
անփերջ շնորհակալութիւնը, աղաղակեց ամբո-
խը միահամուռ ոգեորութեամբ: Միրիանը նո-
րից խօսեց.

— Այժմ դուք ազատ էք, և ես ձեզ կանչեցի
այստեղ, այս ձորի մէջ, որտեղ երկու հարիւր
տարի շարունակ այս աղջկայ սիրող սիրտը ձեզ
համար է աշխատել, որպէսզի թագաւոր ընտ-
րէք ձեզ համար և զիսին արքայական թագ
դնէք. ընարեցէք արժանաւոր, կորովի և հա-
մարձակ մէկին, որը բաղդաւորացնել կարողա-
նայ ձեր ազատւած հայրենիքը:

Ամբոխի մէջ աղմուկ բարձրացաւ. ամենը

էլ կանչում էին, փափախները թափահա-
րում, բայց ոչինչ չէր կարելի հասկանալ: Ահա,
տիուլցիների միջից՝ ամենից յարգւած մի ա-
լեոր դուրս եկաւ, ինչ որ մի բան ասաց ամ-
բոխին, մօտեցաւ քեօխւաներին, որոնք արքայա-
կան թագը նախշուն բարձի վերայ բռնել էին
ձեռներում, վեր առեց բարձր և խորին երկրո-
պագութեամբ տւեց Միրիանին ու ասաց.

— Տիուլցի ժողովուրդը քեզանից իզատ
ոչ աքի չի կամենում իրան թագաւոր ունենալ.
դու մեզ աղատեցիր օտարագաւաններից, դու
էլ, եթէ պէտք լինի, կը պաշտպանես մեզ փոր-
ձանքներից. եղի՛ր ուրեմն մեր թագաւորը և
իմաստութեամբ ու ողորմածութեամբ թագա-
ւորիր մեզ վերայ. բոլոր տիուլցիների կողմից
խնդրում եմ ընդունիր այս թագը և դիր քո
վկին:

— Ով Տիուլեան ժողովուրդ, պատասխա-
նեց Միրիանը՝ գառնալով ամբոխին, ես շնոր-
հակալ եմ ձեղանից այդ պատի համար, որ
ինձ ցոյց էք տալիս. բայց կրկին յիշեցնում եմ
ձեզ, որ ձեր աղատութեան զիսաւոր հեղինակը
ես չեմ, այլ նա է, և միայն նա... և մատնա-
ցոյց արեց Ռուսուգանին: Ուղիղ է, ես ձեզ
համար աշխատեցի. բայց ի՞նչ նշանակութիւն
ունի իմ աշխատանքը, եթէ համեմատենք Ռու-

սուգանի աշխատանքի հետ։ Ինձ թագով էք կամենում վարձատրել։ Բայց ինչով էք վարձատրելու ըուսուգանին՝ նրա արած մեծ զոհաբերութեան համար։ և մի՞թէ երկու հարիւր տարւայ աշխատանքը արժանի չէ ամենաբարձր պարզեփ։ մի՞թէ ես նրանից աւելի ընդունակ եմ սիրելու ձեր երկիրը, որին նու նւիրել է իր բոլոր ուրախութիւններն ու մահթարանքը, ոչ թէ ինձ այլ նրան պէտք է առաջարկէք թազը։

Ամբոխի մէջ զարհուրելի աղմուկ բարձրացաւ, մի մասը ըուսուգանին էր ուզում թագուհի ընտրել, միւսը—Միրիանին։ իսկ երրորդը—երկուսին էլ։

Չսպասելով խառնիճաղանձ ամբոխի պատասխանին՝ Միրիանը վերցրեց թազը և կամենում էր գնել ըուսուգանի սելիկ զանդուրների վերայ։ բայց ըուսուգանը ետ կասեցրեց նրա ձեռքը։

—Ոչ, ոչ, ես խզնուկ մի հովւուհի եմ, այդ զարդը ինձ չի սաղի։ ինձ չի սաղի իշխել ամբողջ ժողովրդի վերայ։ ես զիտեմ սիրել նրան, զոհել նրան՝ ինչ որ կարող եմ, բայց կառավարել՝ ես չեմ կարող։ դու թագաւորի որդի ես և թազը քէ՛ղ կը սաղի։ դու պէտք է ինես Տիուլեան թագաւոր։ եթէ իմ ձայնը

այստեղ որևէ նշանակութիւն ունի՝ ես այդ կը խնդրեմ իմ բոլոր եռանդովր։

—Լաւ, ասաց Միրիանը, ժպիտը դէմքին։ ես կը լինեմ Տիուլյիների թագաւոր, բայց դու էլ պէտք է լինես իմ ամուսինը և թագուհի, ապա թէ ոչ՝ ես չեմ համաձայնւի։

Ծուսուգանը շփոթւեց և խոնարհեցրեց զլուխը։ նրա այտերը ալ վարդի նման կարմրեցին։ կամենում էր ընդդիմանալ, հրաժարւել։ բայց երբ պատահձամբ թագաժառանդի երեսին նայելով՝ տղամարդի պայծառ ու սիրող հայեացքին հանդիպեց, խօսքերը հէնց շըրթունքների վերայ էլ մռան։ աչքերը խոնարհեցրեց և ոչինչ չասաց։ իսկ թագաժառանդը՝ չսպասելով նրա պատասխանին, դարձաւ դէպի ժողովուրդը։

—Տիուլյիներ, շնորհակալութեամբ ընդունում եմ ձեր թազը և խոստանում եմ իմ ամբողջ կեանքում անդուլ հոգ տանել իմ նոր հայրենիքի բարեկաւութեան, բաղդաւորութեան ու փառքի համար։ և թող օգնէ ինձ իմ հոգսերի մէջ ըուսուգանը, իմ ամուսինը և թագուհին։

Ամբոխի բերնից ցնծութեան աղաղակներ դուրս թռան, փափախներ էին որ օդն էին թռչում, և այդ ցնծութեան ձայների մէջ աղ-

մկայոյդ նիսանիի գանգատն ու զրանիտ
քարի ներդաշնակ երգը կուլ գնացին...


Երկար տարիներ թագաւորեց Միրիանը
իր ամուսնու՝ Ռուսուղանի հետ. նրա հայրը՝
Զաւարը մեռաւ. Արտինեան թագաւորութիւնն
էլ միացաւ Տիուեան թագաւորութեան հետ:
Լինելով արդարասէր, կորովի և առատաձեռն՝
Միրիանը ամենքին սիրելի էր. չէր մնացել նրա
մէջ այն անհամբերութեան նշոյն անգամ, որը
մի ժամանակ վշացնում էր նրա հօրը: Մի-
րիանը կատարեց իր խոստուծք. Ռուսուղանի
հետ դահի վերայ նստած օրից նա ոչ մի գործ
կիսատ չթողեց:

Անցան այն օրերից շատ դարեր. յիշողու-
թիւնները նսեմացան ու անհետացան. ամեն ինչ
փոխւեց աշխարհի վերայ... բարք ու վարք,
աւանդութիւն և մարդկային զգեստ. նոյնիսկ
վերոյիշեալ թագաւորութիւնները չքացան, տե-
ղի տալով ուրիշներին. այժմ ոչ ոք չի կարող
իմանալ՝ թէ որտեղ էին Արտինեան կամ Տի-
ուլեան թագաւորութիւնները: Բայց լեռնացին
նեղիկ միշանցքում այժմ էլ, ինչպէս առաջ,
կատաղաբար սլանում է, ծփծփում է և պղդ-
պղճում՝ յաւերժական ձիւներից ծնւած աղմբ-

կայոյդ նիսանի գետակը, արծաթէ փրփուրով
ծածկւած սրբնթաց ալիքները թաւալելով ա-
ռաջ ու առաջ... Այդ ալիքների մէջ՝ առաջ-
ւայ նման անխոռով նստած է զրանիտէ քա-
րի հսկայ զանգածը և նոյնպէս, ինչպէս այն
չին ժամանակներում, երգում է իր հրաշալի
երգը: Եւ յաճախ գալիս են այնտեղ ձանա-
պարհորդներ, լսում են երգի ներդաշնակ ու
վեհ հնչւնները և զարմացմանք հարցնում՝
թէ ի՞նչպէս, ինչու և ի՞նչ պատճառով է եր-
գում քարը:

Բայց անցածը անցել է ու թաղել հե-
ռաւոր դարերի ծոցերում. և ոչ ոք ոչ մի
բացատրութիւն չի կարող տալ:





5-2

496/12
5

Գիւն է 10 ԿՈԴ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0317778

11.710